№ 02 «7»ապրիլի 2021 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №2

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի՝ 2021թ. ապրիլի 7-ին տեղի ունեցած թիվ 2 նիստի

ք. Երևան

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ ՀԱԱՀ կամ Համալսարան) ռեկտորատի նիստերի դահլիճում տեղի ունեցավ համալսարանի հոգաբարձուների խորհրդի նիստը (այսուհետ նաև՝ Խորհուրդ):

Նիստին ներկա էին Համալսարանի Խորհրդի 28 անդամներից 16-ը (խորհրդի անդամ Արեգ Բաղդասարյանը նիստին մասնակցեց հեռավար): Կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը:

Ղեկավարվելով Համալսարանի Կանոնադրության 3-րդ, 32-րդ կետերի, Հիմնադրամների մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 26-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի պահանջներով, Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով հրավիրվեց Խորհրդի նիստ:

Խորհրդի նիստը նախագահում էր Խորհրդի անդամ Գ. Մամիկոնյանը:

Գ. Մամիկոնյանը առաջարկեց քվեարկության դնել նիստի՝ նախապես ծանուցված օրակարգը, որը հաստատվեց միաձայն:

1. Խորհրդի նախագահի ընտրություն,
2. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Խորհրդի անդամներից մեկին պատվիրակելու հարցը,
3. Խորհրդի աշխատակարգը սահմանելու հարցը,
4. Այլ հարցեր:

1. **Խորհրդի նախագահի ընտրություն**:Օրակարգային առաջին հարցի վերաբերյալ իրենց կարծիքներն արտահայտեցին խորհրդի անդամներ Տ. Գաբրիելյանը, Ս. Խանդանյանը, Ա.Հովսեփյանը և այլ անդամներ: Բոլորը ներկայացրեցին և պաշտպանեցին խորհրդի անդամ Գ. Գևորգյանի թեկնածությունը: Քվեարկության արդյունքում 16 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, Գ. Գևորգյանն ընտրվեց Համալսարանի Խորհդի նախագահ:

2. **Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Խորհրդի անդամներից մեկին պատվիրակելու մասին:** Խորհրդի անդամ Գ.Սարգսյանը առաջարկեց Գ.Մամիկոնյանի թեկանծությունը, ով իր պատրաստակամությունը հայտնեց Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները ստանձնելու մասին:

   Խորհրդի անդամները քվեարկեցին՝ կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

   Որոշվեց.

   Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները կստանձնի Գոհար Մամիկոնյանը:

3. **Խորհրդի աշխատակարգը սահմանելու հարցը:** Խորհրդի անդամների որոշմամբ Խորհրդի աշխատակարգ մշակելու նպատակով ձևավորվեց աշխատանքային խումբ Գ.Գևորգյանի, Գ.Մամիկոնյանի և Ա.Մկրտչյանի մասնակցությամբ, որոնց հանձնարարվեց մշակել և Խորհրդի հաստատմանը ներկայացնել Խորհրդի աշխատակարգի նախագիծ:

Հարցը դրվեց քվեարկության, կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց՝

Աշխատանքային խմբին հանձնարարել Խորհրդի հաստատմանը ներկայացնել Խորհրդի աշխատակարգի նախագիծը:

Այլ հարցեր:

1.Քննարկվեց խորհրդի քարտուղարի ընտրության հարցը, քանի որ Խորհիդի քարտուղարը դիմում էր ներկայացրել Խորհրդի կազմից դուրս գալու վերաբերյալ:

Գ. Գևորգյանը առաջադրեց Ա. Մկրտչյանի թեկնածությունը:

Հարցը դրվեց քվեարկության, կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Խորհրդի քարտուղար ընտրել Արփինե Մկրտչյանին, ով նույնպես պետք է աջակցի Գ.Գևորգյանին և Գ.Մամիկոնյանին Խորհրդի աշխատանքների կազմակերպման հարցում:

2. Խորհրդի անդամ Ա.Պողոսյանը առաջարկեց դիմել ռեկտորին Խորհրդի անդամներին տրամադրել «Ագրարային համալսարանի զարգացման 2018-22 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամակացույցի» կատարողական հաշվետվությունները:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կանոնադրության 31-րդ կետի պահանջով՝ դիմել ռեկտորին Խորհրդի անդամներին տրամադրել համապատասխան հաշվետվությունները:

ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Գևորգյանը ամփոփեց Խորհրդի աշխատանքը և նիստը հայտարարեց փակված: